ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 6(86), 29 ՀՈՒԼԻՍ, 2026թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՄՆ DTRA ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ. ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հուլիսի 24-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում հյուրընկալվեց ԱՄՆ Պաշտպանության նախարարության Վտանգների նվազեցման գործակալության (Defense Threat Reduction Agency – DTRA) Գլոբալ վտանգների նվազեցման տնօրինության Եվրոպայի և Աֆրիկայի վարչության պետի պաշտոնակատար Ռիչարդ Սպենսերի գլխավորած պատվիրակությունը:

Պատվիրակությանը ողջունեց Կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանը, ով ներկայացրեց Կրթահամալիրի գործունեության հիմնական ուղղությունները, իրականացվող կրթական ծրագրերը և զարգացման առաջնահերթությունները: Ռեկտորն առանձնակի անդրադարձ կատարեց Կրթահամալիրում սահմանապահ ծառայողների արհեստագործական կրթության կազմակերպման նախաձեռնությանը՝ նշելով, որ այդ ուղղությամբ ներկայումս իրականացվում են ինտենսիվ աշխատանքներ: Մասնավորապես, մշակվում են համապատասխան կրթական չափորոշիչները, ձևավորվում է ուսումնական բազան, ինչպես նաև նախատեսվում է ստեղծել սահմանային վերահսկողության գործընթացների իրական պայմաններին մոտ սիմուլյացիոն ուսումնական միջավայր:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին կրթության և մասնագիտական վերապատրաստման ոլորտում երկկողմ համագործակցության ընդլայնման հնարավորությունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով սահմանապահ ծառայողների կարողությունների զարգացմանը, ուսումնական գործընթացում նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը և միջազգային լավագույն փորձի կիրառմանը:

Կողմերն անդրադարձան սիմուլյացիոն և վիրտուալ ուսուցման համակարգերի, իրավիճակային մոդելավորման լաբորատորիաների, սահմանային վերահսկողության ուսումնական մակետի ստեղծման, էլեկտրոնային ուսուցման հարթակների զարգացման, ինչպես նաև դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման ուղղություններով համագործակցության հնարավորություններին: Քննարկվեց նաև նշված նախաձեռնությունների իրականացման շրջանակներում տեխնիկական և խորհրդատվական աջակցության հնարավորությունը:

Հանդիպումն անցավ կառուցողական մթնոլորտում՝ վերահաստատելով կողմերի պատրաստակամությունը զարգացնելու գործնական համագործակցությունը և աջակցելու ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կրթական կարողությունների շարունակական արդիականացմանը:

Այցի ավարտին պատվիրակության անդամները շրջայց կատարեցին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում, ծանոթացան ուսումնական և վարչական ենթակառուցվածքներին և կրթական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին:

ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ INL-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը շարունակում է միջազգային գործընկերների հետ համագործակցությունը՝ սահմանապահ ծառայության աշխատակիցների արհեստագործական կրթության ներդրման և մասնագիտական կրթության զարգացման ուղղությամբ:

Այդ նպատակով հուլիսի 8-ին ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանության՝ թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (INL) բաժնի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորը ներկայացրեց սահմանապահ ծառայության մասնագիտական կրթության նոր համակարգի ձևավորման գործընթացը, իրականացվող աշխատանքները և առաջիկա ծրագրերը՝ ընդգծելով գործնական կարողությունների զարգացմանը միտված կրթական միջավայրի ձևավորման կարևորությունը:

Քննարկումները հիմնականում ուղղված էին համակարգի զարգացման կարիքների վերհանմանը և հնարավոր համագործակցության շրջանակների նախնական ուրվագծմանը: Մասնավորապես, անդրադարձ կատարվեց նյութատեխնիկական բազայի արդիականացման, գործնական ուսուցման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև վիրտուալ իրականության (VR) տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին՝ գործնական պարապմունքներում օգտագործելու նպատակով:

Կողմերը մտքեր փոխանակեցին նաև մասնագիտական կրթության զարգացման այլ հնարավոր ուղղությունների վերաբերյալ՝ ընդգծելով, որ համագործակցության ձևաչափերն ու աջակցության հնարավոր մեխանիզմները կքննարկվեն հետագա աշխատանքային փուլերում՝ հաշվի առնելով ձևավորվող կարիքներն ու առաջնահերթությունները:

ՆԳՆ կրթահամալիրը շարունակում է ակտիվ համագործակցությունը միջազգային գործընկերների հետ՝ նպատակ ունենալով ձևավորել սահմանապահ ծառայության աշխատակիցների ժամանակակից, արդյունավետ և միջազգային լավագույն փորձին համահունչ մասնագիտական կրթության համակարգ:

ՄՅՈՒՆԽԵՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Հուլիսի 6-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիր էր այցելել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մյունխենի քրեական հետախուզության վարչության պետի տեղակալի գլխավորած պատվիրակությունը:

Պատվիրակության անդամներին ընդունել է ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանը:

Հանդիպման ընթացքում ռեկտորը ներկայացրել է Կրթահամալիրի գործունեությունը, իրականացվող հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, ինչպես նաև ոստիկանության ծառայողների պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հյուրերը կարևորել են այցը՝ ընդգծելով նման հանդիպումների նշանակությունը մասնագիտական փորձի փոխանակման և միջազգային համագործակցության զարգացման տեսանկյունից: Նրանք հետաքրքրություն են հայտնել ՆԳՆ կրթահամալիրի հետ հետագա համագործակցության հնարավորությունների նկատմամբ, մասնավորապես՝ քրեական ոստիկանության ծառայողների կրթության և մասնագիտական պատրաստման ոլորտում:

Այցի ավարտին պատվիրակության անդամների համար կազմակերպվել է շրջայց ՆԳՆ կրթահամալիրում, որի ընթացքում նրանք ծանոթացել են կրթական գործընթացի կազմակերպման պայմաններին, ուսումնական ենթակառուցվածքներին և Կրթահամալիրի հնարավորություններին:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՏԻԿՆԻԿՆԵՐ՝ ՀՕՖ-Ի «ՄԱՐԴԻԳՅԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ»

Հուլիսի 22-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ներկայացուցիչները՝ պրոռեկտոր Էգ Մարգարյանի գլխավորությամբ, հյուրընկալվել էին Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) «Մարդիգյան երեխաների պաշտպանության կենտրոնում»:

Այցի շրջանակում Կրթահամալիրը կենտրոնին նվիրաբերեց երեխաների հարցաքննության համար նախատեսված հատուկ տիկնիկներ:

Հատուկ տիկնիկները նախատեսված են երեխաների հետ հարցաքննության և հաղորդակցության գործընթացում կիրառելու համար: Դրանք մասնագետներին հնարավորություն են տալիս առավել արդյունավետ կազմակերպել աշխատանքը երեխաների հետ՝ հաշվի առնելով նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, նպաստում են երեխայի համար ավելի անվտանգ և վստահելի միջավայրի ձևավորմանը:

Կրթահամալիրը տիկնիկների երկու լրակազմ ստացել էր Չեխիայի Հանրապետության քրեական ոստիկանության և հետաքննության ծառայության բյուրոյի փորձագետներից՝ Կրթահամալիրում իրականացված «18 տարին չլրացած անձի հարցաքննությունը հատուկ սենյակում» թեմայով խորացված վերապատրաստման դասընթացի շրջանակում:

Կարևորելով ստացված մասնագիտական գործիքների նպատակային կիրառումը՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը որոշեց տիկնիկների մեկ լրակազմ փոխանցել «Մարդիգյան երեխաների պաշտպանության կենտրոնին», որի գործունեության հիմնական ուղղություններից է երեխաների պաշտպանության և տուժած երեխաների աջակցության ապահովումը:

ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը շարունակում է արդիականացնել կրթական գործընթացները՝ զարգացնելով փրկարար ծառայողների մասնագիտական կարողությունները:

Հուլիսի 20–22-ը Դրոններով մրցավազքի Հայաստանի ֆեդերացիայի և ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի համագործակցության շրջանակում անցկացվեց «Անօդաչու թռչող սարքերի կիրառումը բնակչության պաշտպանության և որոնողափրկարարական աշխատանքներում» թեմայով մասնագիտական վերապատրաստման դասընթացը, որին մասնակցեցին ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ծառայողները:

Դասընթացը կազմակերպվել էր երկու փուլովգ տեսական ուսուցումն ու գործնական պարապմունքների մի մասն անցկացվեցին Կրթահամալիրում, իսկ գործնական պարապմունքների մյուս մասը՝ «Ծիրան» ակադեմիայում, որտեղ մասնակիցները գործնական պայմաններում ամրապնդեցին ստացած գիտելիքները և կատարելագործեցին անօդաչու թռչող սարքերի կիրառման հմտությունները որոնողափրկարարական աշխատանքներում:

Վերապատրաստման ընթացքում փրկարարները ծանոթացան անօդաչու թռչող սարքերի (դրոնների) անվտանգ և արդյունավետ կիրառման սկզբունքներին, ձեռք բերեցին դրանց կառավարման տեսական և գործնական հմտություններ, ուսումնասիրեցին ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման լավագույն փորձը որոնողափրկարարական աշխատանքներում և բնակչության պաշտպանության ոլորտում:

Այսօր դրոնները դարձել են արտակարգ իրավիճակներին արձագանքման, անհայտ կորած անձանց որոնման, դժվարամատչելի տարածքների հետախուզման, աղետների հետևանքների գնահատման և օպերատիվ որոշումների ընդունման կարևորագույն գործիքներից մեկը: Հետևաբար, դրանց արդյունավետ կիրառման հմտությունների զարգացումն էական նշանակություն ունի փրկարար ծառայողների մասնագիտական պատրաստվածության բարձրացման և որոնողափրկարարական գործողությունների արդյունավետության ապահովման համար:

Կրթահամալիրը կարևորում է գործընկերների հետ համագործակցությունը՝ կրթական գործընթացներում նորարարական լուծումների ներդրման և գործնական կարողությունների զարգացման նպատակով: Հայաստանի դրոնների ֆեդերացիայի հետ իրականացվող համագործակցությունը ևս մեկ քայլ է ժամանակակից տեխնոլոգիաները փրկարար ծառայության գործունեության մեջ ինտեգրելու և բարձր պատրաստվածությամբ մասնագետներ ձևավորելու ուղղությամբ:

Կրթահամալիրը շարունակելու է ընդլայնել նման նախաձեռնությունները՝ նպաստելով ժամանակակից, գիտելիքահեն և նորարարական կրթական միջավայրի ձևավորմանը, որի գլխավոր նպատակը մարդկային կյանքերի պաշտպանությունն ու փրկությունն է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ

Հուլիսի 7-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի նախաձեռնությամբ և կազմակերպմամբ առցանց ձևաչափով անցկացվեց «Ոստիկանության բարեփոխումների արդի մարտահրավերները» խորագրով 11-րդ միջազգային գիտագործնական համաժողովը:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի, ԱՊՀ գործընկեր բուհերի, ինչպես նաև ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի, քրեական ոստիկանության գլխավոր վարչության և համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ներկայացուցիչներ:

Համաժողովի բացման խոսքով հանդես եկավ Կրթահամալիրի գիտահետազոտական աշխատանքների և նորարարությունների գծով պրոռեկտոր Էմիլ Մարգարյանը: Ողջունելով մասնակիցներին՝ նա ընդգծեց համաժողովի թեմայի արդիականությունը՝ նշելով, որ ժամանակակից պայմաններում ոստիկանության գործունեության կատարելագործումը, միջազգային փորձի ուսումնասիրությունն ու գիտական համագործակցության զարգացումը կարևոր նախապայմաններ են իրավապահ համակարգի շարունակական բարեփոխումների համար:

Է. Մարգարյանը շեշտեց, որ համաժողովը մասնագիտական երկխոսության, գիտական փորձի փոխանակման և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման կարևոր հարթակ է, որը հնարավորություն է ընձեռում համատեղ քննարկելու ոստիկանության ոլորտի առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարման արդյունավետ ուղիները:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՌԴ ՆԳՆ Սիբիրի իրավաբանական ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարինա Գալիմովան:

Համաժողովի ընթացքում զեկույցներով հանդես եկան ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներկայացուցիչներ, ինչպես նաև գործընկեր բուհերի՝ ՌԴ ՆԳՆ աշխատակիցների որակավորման բարձրացման համառուսաստանյան ինստիտուտի, ՌԴ ՆԳՆ Նիժեգորոդի ակադեմիայի և Տաջիկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի ներկայացուցիչներ:

Համաժողովն անցավ ակտիվ մասնագիտական քննարկումների, կառուցողական երկխոսության և միջազգային փորձի փոխանակման մթնոլորտում՝ ևս մեկ անգամ կարևորելով ՆԳՆ կրթահամալիրի՝ որպես իրավապահ կրթության և գիտագործնական համագործակցության հարթակի դերը:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև վիզաների ազատականացման երկխոսության շրջանակներում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում շարունակվում են սահմանապահ ծառայության աշխատակիցների արհեստագործական կրթության ներդրմանն ուղղված աշխատանքները:

Այդ համատեքստում տեղի է ունեցել աշխատանքային առցանց հանդիպում ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում վիզաների ազատականացման երկխոսությանը սահմանային կառավարման, փաստաթղթերի անվտանգության և իրավապահ մարմինների բարեփոխումների ոլորտում» ծրագրի ներկայացուցիչների հետ:

Առցանց հանդիպման ընթացքում Կրթահամալիրի ռեկտորը ներկայացրեց սահմանապահ ծառայության մասնագիտական կրթության նոր համակարգի ձևավորման ուղղությամբ արդեն իրականացված և նախատեսվող աշխատանքները՝ անդրադառնալով կրթական բովանդակության մշակման, գործնական ուսուցման կազմակերպման և համակարգի հետագա զարգացման առաջնահերթություններին:

Քննարկման ընթացքում կողմերը դիտարկեցին համագործակցության հնարավոր ուղղությունները՝ միջազգային փորձագետների ներգրավման, կրթական ծրագրերի և ուսումնական մոդուլների մշակման, դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների զարգացման, նյութատեխնիկական բազայի արդիականացման, ինչպես նաև գործնական պարապմունքների արդյունավետ կազմակերպման նպատակով սիմուլյացիոն ուսումնական միջավայրի ձևավորման շրջանակներում:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց միջազգային լավագույն փորձի ուսումնասիրմանն ու դրա կիրառմանը սահմանապահ ծառայության մասնագիտական կրթության համակարգում, քննարկվեց աշխատանքային այցեր կազմակերպելու հնարավորությունը՝ գործընկեր կառույցներում կրթական գործընթացներին տեղում ծանոթանալու, փորձի փոխանակման և հետագա համագործակցության ուղղությունները հստակեցնելու նպատակով:

Հանդիպման մասնակիցները կարևորեցին միջազգային գործընկերների փորձագիտական և խորհրդատվական աջակցությունը՝ որպես սահմանապահ ծառայության աշխատակիցների ժամանակակից, գործնական հմտությունների վրա հիմնված և միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական կրթության համակարգի ձևավորման կարևոր նախապայման:

«ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹՆԵՐ ԵՎ DARK NET» ԹԵՄԱՅՈՎ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Հուլիսի 7-8-ը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի Թմրամիջոցների դեմ պայքարի վարչության (DEA) Անկարայի գրասենյակի նախաձեռնությամբ անցկացվել է «Կրիպտոարժույթներ և Dark Net» թեմայով երկօրյա աշխատաժողով:

Աշխատաժողովը վարել են DEA-ի Անկարայի գրասենյակի կցորդ Ջուլիա Կասիանոն և հատուկ գործակալ Ջոզեֆ Քելլին:

Աշխատաժողովին մասնակցել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության, ՀՀ գլխավոր դատախազության և Կրթահամալիրի ներկայացուցիչները:

Երկօրյա աշխատաժողովի ընթացքում մասնակիցները քննարկել են կրիպտոարժույթների կիրառմամբ կատարվող հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, իրականացրել կրիպտոարժույթի դեպքերի վերլուծություն, ուսումնասիրել Dark Net միջավայրի առանձնահատկությունները, անդրադարձել են թվային ապացույցների հավաքագրման, միջազգային համագործակցության և ժամանակակից մարտահրավերներին առնչվող այլ հարցերի:

Աշխատաժողովը նպատակ ուներ նպաստելու իրավապահ մարմինների ներկայացուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ թվային միջավայրում կատարվող հանցագործությունների բացահայտման և արդյունավետ քննության ուղղությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՅՑ «ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ-ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆ»

Հուլիսի 1-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Դավիթ Հովսեփյանը և ոստիկանության Կենտրոնի վետերանների խորհրդի նախագահ Գագիկ Վարդանյանն այցելել են «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» ՊՈԱԿ:

Այցի նպատակն էր դպրոցի տնօրինությանը փոխանցել ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի «Պատիվ ունեմ» պաշտոնաթերթի 2026 թվականի մայիսի 29-ի N 4 համարի 20 օրինակ, որում հրապարակվել էր Դ. Հովսեփյանի հեղինակած հոդվածը՝ նվիրված կենտրոնի ավագ դպրոցի աշակերտների՝ Կրթահամալիր կատարած այցին և ոստիկանության պատմության թանգարան կատարած շրջայցին: Հիշեցնենք, որ դպրոցի աշակերտները Կրթահամալիր էին այցելել 2023 թվականի հունվարի 31-ին և 2026 թվականի մայիսի 6-ին:

Դ. Հովսեփյանը, կարևորելով հաստատությունների միջև ձևավորված համագործակցությունը, շնորհակալություն է հայտնել դպրոցի կոլեկտիվին՝ երեխաների կրթության և դաստիարակության գործում ցուցաբերած նվիրումի ու հոգատարության համար:

Դպրոցի տնօրեն Աննա Բաբայանն էլ իր հերթին շնորհակալություն է հայտնել հյուրերին՝ այցելության, համագործակցության և ուշադրության համար՝ ընդգծելով նման նախաձեռնությունների կարևորությունը կրթական գործընթացում:

Հանդիպման ավարտին կողմերը վերահաստատել են համագործակցությունը շարունակելու և համատեղ նախաձեռնությունների շրջանակն ընդլայնելու պատրաստակամությունը:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԵՏՆ ԱՆԳԱՄ ԿԱՐՈՂ Է ՄՆԱԼ ՉԼՍՎԱԾ, ԵԹԵ ՉՈՒՆԻ ՈՒՍԱՆՈՂԻ ՍՐՏԻՆ ՈՒ ՄԻՏՔԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

Զրույց՝ մանկավարժության մասին

Մանկավարժության էության, դերի, մեթոդների մասին զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ԱՌԿՔՊ ամբիոնի դասախոս Անդրանիկ Ավանեսյանի հետ, ով, երկար տարիներ անմնացորդ նվիրումով գործի դնելով իր մասնագիտական հմտությունները, սովորողներին դասավանդում է «Քաղաքացիական պաշտպանություն», «Քաղաքացիական պաշտպանության հիմունքներ», «Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ», «Ընդհանուր տակտիկայի և օպերատիվ արվեստի հիմունքներ» առարկաները:

- Բարև Ձեզ, պարո՛ն Ավանեսյան, երբ ընտրեցիք այս մասնագիտությունը, Դուք գիտակցու՞մ էիք այդ առաքելությունն ստանձնելու բարդությունը:

- Դասախոսի առաքելությունը բազմակողմանի և բարձր պատասխանատվություն ենթադրող մասնագիտական գործունեություն է, քանի որ այն ներառում է ոչ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների փոխանցումը, այլև սովորողի անձի, արժեքային համակարգի, աշխարհայացքի և սոցիալական վարքագծի ձևավորմանն ու զարգացմանը նպաստելը: Այս առաքելությունը պահանջում է մասնագիտական բարձր պատրաստվածություն, մանկավարժական վարպետություն և շարունակական ինքնազարգացում:

Թվային տեխնոլոգիաների պայմաններում ձևավորված սերունդն ունի ուսուցման, տեղեկատվության ընկալման և հաղորդակցման հատուկ առանձնահատկություններ: Այդ պատճառով կարևոր է կիրառել ժամանակակից մանկավարժական մեթոդներ և ստեղծել փոխըմբռնման վրա հիմնված կրթական միջավայր:

Կրթական գործընթացում կարող են առաջանալ տարբեր բնույթի կոնֆլիկտներ՝ սովորողի, ծնողի և կրթական հաստատության ներկայացուցիչների միջև: Կոնֆլիկտները կարող են լինել ինչպես կառուցողական, այնպես էլ քայքայիչ, ուստի դասախոսի կարևորագույն գործառույթներից է յուրաքանչյուր իրավիճակի օբյեկտիվ գնահատումը, արդյունավետ հաղորդակցման ապահովումը և այնպիսի լուծումների ընտրությունը, որոնք կնպաստեն համագործակցության պահպանմանն ու կրթական գործընթացի արդյունավետությանը:

Տեղեկատվական հագեցած միջավայրում սովորողների ուշադրությունը երկար ժամանակ կենտրոնացած պահելը դարձել է առավել բարդ: Այդ պատճառով անհրաժեշտ է կիրառել հետաքրքրություն խթանող, ակտիվ ուսուցման և թվային տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդներ, որոնք կնպաստեն սովորողների ներգրավվածության և ներքին մոտիվացիայի ձևավորմանը:

- Ընտանիք, աշխատանք և առավել ևս՝ գիտական աշխատանք, ինչպե՞ս եք կարողանում համատեղել:

- Ինձ համար ընտանիքը ոչ միայն կյանքի կարևորագույն արժեքն է, այլև առաջընթացի գլխավոր շարժառիթը: Ընտանիքիս բարօրությունը, երեխաներիս համար ավելի լավ ապագա ստեղծելու ձգտումը և հարազատներիս աչքերում հպարտություն տեսնելն ուժ ու պատասխանատվության զգացում են տալիս՝ շարունակելու սովորել, զարգանալ և առավել նվիրումով կատարել իմ մասնագիտական ու գիտական գործունեությունը:

Ընտանիքը հասարակության կառուցման հիմնաքարն է, որտեղ ձևավորվում են մարդու աշխարհայացքը, բարոյահոգեբական արժեքները, վարքագիծը, իսկ ընտանիքում ձեռք բերված հմտությունները (բանակցելու կարողություն, համբերատարություն) օգնում են աշխատանքում և հակառակը՝ աշխատանքային կազմակերպչական հմտությունները՝ ընտանիքում: Լավագույն կապն այն է, որ աշխատանքը տալիս է միջոցներ ու հնարավորություններ՝ ընտանեկան կյանքը վայելելու համար, իսկ ընտանիքը տալիս է իմաստ և ուժ՝ աշխատանքում մասնագիտական արդյունավետությանը:

Գիտական աշխատանքը ժամանակատար է, պահանջում է մտքերի խոր կենտրոնացում, որն էլ հաճախ մեզ հետ «տուն ենք տանում»: Այն հաճախ լի է անորոշություններով կամ ձախողված փորձերով: Եվ կարելի է ասել, որ նմանատիպ իրավիճակներում ընտանիքի դերակատարումը շատ կարևոր է, ավելի ճիշտ, ընտանիքն այն միջավայրն է, որտեղ մարդն (մասնագետն) իրեն զգում է անվտանգ և սիրված: Ընտանիքի և աշխատանքի միջև կապը ժամանակակից կյանքի ամենաբարդ, դինամիկ և կարևոր փոխհարաբերություններից մեկն է:

- Ինչպե՞ս եք միաձուլում խստությունն ու կարգապահությունը դասը վարելու ինտերակտիվ մեթոդի հետ:

- Ինձ համար ինտերակտիվ ուսուցումը պարզապես մեթոդ չէ, այլ մանկավարժական մտածողություն: Այս մոտեցման նպատակը ոչ թե պարզապես միայն գիտելիք փոխանցելն է, այլ ստեղծել այնպիսի կրթական միջավայր, որտեղ սովորողը մտածում է, հարցադրում է կատարում, համագործակցում և սեփական ճշմարտությունն ու մտքերը կառուցում:

Իմ լսարանում կարգապահությունը երբեք նպատակ չէ, այլ արդյունավետ ուսուցման նախապայման: Դասի սկզբում սովորողների հետ սահմանում ենք համագործակցության հստակ կանոններ, որոնք հիմնված են փոխադարձ հարգանքի, պատասխանատվության և միմյանց լսելու մշակույթի վրա:

Ես խստությունը չեմ նույնացնում խստապահանջ վերաբերմունքի հետ: Ինձ համար խստությունը նշանակում է սկզբունքայնություն, հետևողականություն, արդարություն և բոլոր սովորողների նկատմամբ հավասար պահանջներ: Միաժամանակ կարևոր եմ համարում պահպանել վստահության և համագործակցության մթնոլորտը, որտեղ յուրաքանչյուր սովորող իրեն զգում է լսված, գնահատված և անվտանգ:

Համոզված եմ, որ լավագույն դասն այն չէ, որտեղ պարզապես լռություն է տիրում, այլ այն, որտեղ կազմակերպված միջավայրում սովորողները մտածում են, քննարկում, համագործակցում և սովորում միմյանցից: Այդպիսի լսարանում կարգապահությունն ու ինտերակտիվությունը ոչ միայն համատեղելի են, այլև փոխադարձաբար պայմանավորում են միմյանց արդյունավետությունը:

- Ի՞նչ մեթոդներով կարելի է դրդել անգամ ամենածույլ ուսանողին սովորել հետաքրքրությամբ:

- Ծուլությունը բնական երևույթ է, որին կյանքում գոնե մեկ անգամ (կամ սովորաբար ավելի հաճախ) բախվում է յուրաքանչյուր մարդ: Իրականում ծուլությունը ոչ թե խնդիրն է, այլ ազդանշան, որ օրգանիզմում կամ հոգեկան վիճակում ինչ-որ բան այն չէ:

«Ամենածույլ» ուսանողին սովորելու դրդելը՝ մանկավարժության և հոգեբանության ամենաբարդ խնդիրներից է: Այս խնդրի հաղթահարումը դասախոսից պահանջում է ոչ միայն մասնագիտական բարձր պատրաստվածություն, այլև հոգեբանական նրբանկատություն ու ճկուն մեթոդական հմտություններ:

Ամենածույլ ուսանողին շարժելու բանալին ակտիվ ներգրավումն է դասընթացին:

- Ինչու՞ ընտրեցիք հենց մանկավարժի մասնագիտությունը, արդյո՞ք ընտրությունը ծնողների կողմից էր, թե՞ ինքնաբուխ:

- Իմ ընտրությունը բացարձակապես ինքնաբուխ էր և, կարելի է ասել, իմ կյանքի ու աշխատանքային հարուստ փորձի բնականոն, տրամաբանական շարունակությունը: Ծնողներս որևէ դեր չեն ունեցել այս հարցում, իմ անցած ճանապարհն ինքնին ինձ բերեց դեպի մանկավարժություն:

Մինչ մանկավարժական գործունեությանն անցնելը ես ավարտել եմ Երևանի Կգ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը, այնուհետև աշխատել եմ տարբեր կառույցներում՝ ձեռք բերելով գործնական և ինժեներական հմտություններ: Սակայն իմ կյանքի ամենաառանցքային փուլը եղավ ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայության անցնելը, որի ընթացքում ենթակա անձնակազմի հետ անցկացրել եմ վերապատրաստման դասընթացներ, մարտական պատրաստության ուսումնավարժանքներ և այլ տարաբնույթ պարապմունքներ: Այդ տարիների հրամանատարական փորձը, ձեռք բերված հմտություններն ու կարողություններն ամուր հիմք դարձան, որը ծառայությանս ավարտից հետո աշխատանքային գործունեությունս շարունակեմ կրթության ոլորտում:

- Ինչպիսի՞ մարտահրավերների եք հանդիպել դասավանդման ընթացքում:

- Իմ առաջին և ամենամեծ հոգեբանական մարտահրավերը եղել է միջավայրի կտրուկ փոփոխությունը: Զինվորական ծառայության մեջ ես սովոր էի և՛ իմ, և՛ իմ ենթակաների կողմից հրամանների անվերապահ կատարմանը, ուստի քաղաքացիական կյանքին անցումը պահանջեց լուրջ վերակողմնորոշում: Երբ լսարան մտա, հասկացա, որ հրամայական կարգապահությունից պետք է անցնել փոխադարձ հարգանքի վրա հիմնված կարգապահության: Իմ նպատակը դարձավ կրթել ոչ թե «այդպես է հրամայված» սկզբունքով, այլ ուսանողների մեջ սերմանել նյութի հանդեպ հետաքրքրություն և դրա կարևորության գիտակցում:

▶ 4

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ՝ ՆՈՐ ՍԿԶԲԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Ստեփանավանում հրաժեշտ տվեցին ՆԳՆ Կրթահամալիրի քոլեջի շրջանավարտներին

Հունիսի 28-ին Ստեփանավանի՝ Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատում տոնական և հուզիչ մթնոլորտում կայացավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Ստեփանավանում իրականացվող միջին մասնագիտական կրթական ծրագրերի (քոլեջ) շրջանավարտների «Վերջին զանգի» հանդիսավոր միջոցառումը:

Այս օրը դարձավ հիշարժան ոչ միայն 53 շրջանավարտների, այլև նրանց ծնողների, դասախոսների, ընկերների և բոլոր ներկաների համար: Այն խորհրդանշեց ուսանողական կյանքի ավարտն ու մասնագիտական նոր ճանապարհի սկիզբը:

Հանդիսավոր միջոցառման ընթացքում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանի անունից շրջանավարտներին շնորհավորեց փրկարարական ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման պետի տեղակալ, փրկարար ծառայության գնդապետ Հովհաննես Հովհաննիսյանը, ով, բարձր գնահատելով շրջանավարտների անցած ուղին, շնորհակալություն հայտնեց դասախոսական անձնակազմին՝ նվիրված աշխատանքի համար, և երիտասարդներին մաղթեց մասնագիտական հաջողություններ, պատասխանատվությամբ ու պատվով ծառայել հայրենիքին և հասարակությանը:

Ստեփանավան համայնքի ղեկավարի անունից շրջանավարտներին իր ջերմ բարեմաղթանքները փոխանցեց նաև աշխատակազմի քարտուղար Հասմիկ Մովսիսյանը, ով ընդգծեց կրթության, մասնագիտական պատրաստվածության և երիտասարդների ակտիվ մասնակցության կարևորությունը համայնքի զարգացման գործում:

Օրհնության և հայրական պատգամի խոսքով հանդես եկավ նաև Ստեփանավանի հոգևոր հովիվ Տեր Մամբրե քահանան և շրջանավարտներին մաղթեց խաղաղ, արժանապատիվ և բարի ճանապարհ՝ հավատքով ու պատասխանատվությամբ կառուցելու իրենց ապագան:

Հատկանշական է, որ ՆԳՆ կրթահամալիրի միջին մասնագիտական կրթական ծրագիրն արդեն շուրջ 20 տարի հաջողությամբ իրականացվում է Ստեփանավանում՝ դառնալով տարածաշրջանի կրթական կարևոր նախաձեռնություններից մեկը: Այս տարիների ընթացքում հարյուրավոր երիտասարդներ այստեղ ստացել են մասնագիտական կրթություն և համալրել տարբեր պետական ու մասնավոր կառույցների շարքերը:

Այս տարվա ավարտական խումբը կազմված էր 53 շրջանավարտից՝ չորս մասնագիտություններով: Նրանք ավարտեցին ուսումը՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և մասնագիտական կարողություններ:

Միջոցառումն աչքի ընկավ իր գեղեցիկ մշակութային ծրագրով, որի կազմակերպչական աշխատանքները մեծ նվիրումով իրականացրել էր նախկին կուրսղեկ Արինա Առաքելյանը: Երգերն ու պարերը, հումորային բեմականացումները, շնորհավորանքներն ու շնորհակալական խոսքերն ստեղծեցին ջերմ ու անկեղծ մթնոլորտ՝ լցված հուզիչ հիշողություններով և ապագայի հանդեպ մեծ հավատով:

«Վերջին զանգը» յուրաքանչյուր կրթօջախի կյանքում առանձնահատուկ իրադարձություն է: Այն միաժամանակ հրաժեշտ է անցած տարիներին և վստահ քայլ դեպի ապագա: Այս օրը ևս մեկ անգամ ապացուցեց, որ Ստեփանավանում ձևավորված կրթական ավանդույթները շարունակվում են՝ պատրաստելով գիտելիքներով, պատասխանատվությամբ և հայրենասիրությամբ զինված նոր մասնագետներ:

Բարի ճանապարհ, սիրելի՛ շրջանավարտներ:

Թող ձեր ձեռք բերած գիտելիքները դառնան ամուր հիմք նոր հաջողությունների, իսկ յուրաքանչյուր ձեռքբերում՝ արժանի շարունակությունն այն ճանապարհի, որն սկսվեց ՆԳՆ կրթահամալիրի Ստեփանավանի կրթական ծրագրում: Մաղթում ենք խաղաղ երկինք, մասնագիտական վերելքներ և անսպառ հավատ սեփական ուժերի նկատմամբ:

Ստեղծագործում են մերոնք

Ո՞Վ Է ԱՌԱՎԵԼ

Իսկ դու երբևէ դատարկ եղե՞լ ես,
Լիքը եղե՞լ ես, որ դատարկ լինես,
Երբևէ դու քեզ խորդ զգացե՞լ ես,
Արյան ցասումից խելագարվե՞լ ես,
Հոգու ցավերին ընդդիմացե՞լ ես,
Վրեժի կանչից շուտ բորբոքվե՞լ ես,
Ցավից, տագնապից ըմբոստացե՞լ ես,
Հետո վերստին վերադարձե՞լ ես:
Հաստատ եղել է ու պատահել է,
Չմտածե՛ս՝ ում հետ չի եղել, նա առավել է,
Առավել է նա, ով այսքանի հետ լուռ գալարվել է,
Ցավից խեղճացել, բայց պայքարել է,
Աչքերը կորցրել, բայց միշտ տեսել է,
Որ արդարինն է դարը ահարկու,
Լեզուն բերանում ուռել, թմրել է,
Բայց չի դադարել գոռալ, տարածել,
Որ մարդկությանը շատ են անիծել,
Որ մանուկը, դեռ լույս աշխարհ չեկած,
Ծնվում է մեղքով, անգամ՝ անիծված:
Առավել է նա, ով իրենից բացի
Տեսնում է ուրիշին՝ ուշիմ, խելացի,
Առավել է նա, ով եկել-տարել,
Խոստացած օրը շուտ հետ է բերել,
Առավել է նա, ով կյանքը զոհել
Ու իր թանկ կյանքով երկիր է պահել,
Ով չի վարանել, չի երերացել,
Փախչելու ճամփան չի էլ մտածել,
Ով վերջին պահին «մայրի՜կ» է կանչել,
Ու տաք մարմինը այդտեղ է սառչել,
Փարվել է ամուր նա իր մայր հողին,
Երկինք է ճամփել իր մանուկ հոգին...

Մելսիդա Ավետիսյան
Շրջանավարտ

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՏՈՒՀԱՆ

Նախորդ համարի պատասխանները

1. Մոլորակներն արտացոլում են աստղերի լույսը:
2. Շաբաթ
3. Ո՛չ միշտ: Լռում ես, երբ իմաստ չունի հակառակվել: Լռում ես, երբ դաստիարակությունդ թույլ չի տալիս վիճել: Լռում ես, երբ ինքնահաստատման կարիք չունես:

Ի վերջո, լռությունը խոհեմության նշան է:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԵՏՆ ԱՆԳԱՄ ԿԱՐՈՂ Է ՄՆԱԼ ՉԼՍՎԱԾ, ԵԹԵ ՉՈՒՆԻ ՈՒՍԱՆՈՂԻ ՍՐՏԻՆ ՈՒ ՄԻՏՔԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ

3 ◀

- Ինչպե՞ս պետք է լինի ուսանող-դասախոս հարաբերությունը:

- Ուսանող-դասախոս հարաբերությունը պետք է հիմնված լինի երկխոսության, փոխադարձ հարգանքի և համագործակցության վրա:

Առողջ հարաբերություններում խոսում են երկուստեք:

Այս հարաբերություններում կարևոր է պահել ակադեմիական հեռավորությունը: Չափազանց մեծ ավտորիտարիզմը ճնշում է մոտիվացիան, իսկ չափից ավելի ընկերական հարաբերությունները կարող են վնասել լսարանի լրջությանն ու արդյունավետությանը: Լավագույն տարբերակը հարգալից, պրոֆեսիոնալ և ջերմ մթնոլորտն է:

Եթե ուսանողը կոպիտ է կամ դժգոհ, պետք է հիշենք, որ դա հաճախ ուղղված է ոչ թե անձամբ մեզ, այլ համակարգին կամ իր սեփական անհաջողություններին, կամ եթե ուսանողը խանգարում է դասը, պետք չի նվաստացնել նրան լսարանի առաջ (դա նրան կդարձնի «հերոս» կամ «զոհ» մյուսների աչքերում): Պետք է հրավիրել առանձին զրույցի և հարցնել. «Նկատել եմ, որ դժգոհ ես դասերից: Ի՞նչն է պատճառը, և ինչպե՞ս կարող եմ դա լուծել և այլն»:

- Լսարան պահելը շատ դժվար է, լավ մասնագետ լինելը դեռ բավարար չէ դասը լսելի դարձնելու և առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար: Կասե՞ք՝ ո՞րն է Ձեր գաղտնիքը և ինչպե՞ս եք մոտիվացնում ուսանողներին:

Գիտելիքի պաշարը միայն հիմքն է, բայց ոչ երբեք լսարանը գրավելու երաշխիքը: Լավագույն մասնագետն անգամ կարող է մնալ չլսված, եթե չունի ուսանողի սրտին ու միտքին հասնելու բանալին: Իմ գաղտնիքը պարզ է, ես չեմ մատուցում չոր տեսություն, այլ մատուցված նյութի հետ ստեղծում եմ նաև երկխոսություն: Մոտիվացիայի աղբյուրն այն է, երբ ուսանողը տեսնում է, թե ինչպես է տվյալ առարկան փոխում իր աշխարհընկալումը, և ինչպես կարող է այն կիրառվել կյանքում հենց թեկուզ այսօր:

- Որո՞նք են Ձեր ուժեղ և թույլ կողմերը:

Իմ ուժեղ կողմերից են անկողմնակալությունը և խիստ պատասխանատվությունը, ես չունեմ անձնական շահեր, էմոցիոնալ տրամադրություններ կամ կանխամտածված վերաբերմունք: Իմ պատասխանները հիմնված են փաստերի և տրամաբանության վրա:

Իմ թույլ կողմերից են աշխատանքային և կազմակերպչական գործունեությունում մանրախնդրությունը, այսինքն՝ ամեն ինչ կատարյալ անելու ձգտումը, որը հաճախ բերում է սթրեսի և դանդաղեցնում է ընդհանուր առաջընթացը, ինչպես նաև միջանձնային և հաղորդակցման ուղղությամբ «Ոչ» ասելու անկարողությունը, այսինքն՝ ուրիշներին մերժել չկարողանալը, ինչի պատճառով հաճախ ծանրաբեռնվում եմ օտար խնդիրներով՝ ի վնաս իմ շահերի: Սակայն սրանք ուղղակի այն կետերն են, որոնց վրա աշխատելով մարդը դառնում է ավելի ուժեղ և հավասարակշռված:

- Պատմե՛ք Ձեր կյանքի գլխավոր ձեռքբերման մասին:

- Ես կյանքում ձեռք եմ բերել մարդկանց (ընտանիք, ընկերներ, հարազատ անձնավորություններ), ում հետ կապված եմ հոգեպես, ում վստահում եմ, ում հարգում եմ և ունեմ նրանց փոխադարձ հարգանքը: Կյանքում պաշտոնը ժամանակավոր է, մնայունը ջերմությունն ու սերն է մտերիմների հետ:

- Ինչպե՞ս կգնահատեք այսօրվա սերնդին: Ձեր մանկավարժական երկար տարիների փորձից ինչ՞ կցանկանաք փոխանցել ուսանողներին:

- Այսօրվա սերունդը միանգամայն յուրահատուկ է: Նրանք ծնվել են թվային աշխարհում, և դա տվել է նրանց ինչպես հզոր առավելություններ, այնպես էլ նոր մարտահրավերներ: Նրանք ակնթարթորեն գտնում են անհրաժեշտ տեղեկատվությունը, տիրապետում են տեխնոլոգիաներին և ունակ են սովորելու առանց աշխարհագրական սահմանների: Ուսանողներին կցանկանայի՝ սովորեն՝ սովորելու և կիրառելու համար:

- Ի՞նչ եք կարծում, մանկավարժին ստաժն է մանկավարժ դարձնու՞մ, թե՞ մանկավարժ ծնվում են:

- Այս միտքը կարելի է համատեղել: Սա հավերժական բանավեճ է, սակայն լավագույն մանկավարժները սովորաբար ձևավորվում են բնատուր տաղանդի և տարիների փորձի (ստաժի) միաձուլումից:

Ինչու՞ են ասում, որ մանկավարժ ծնվում են.

Որքան էլ մարդը տաղանդավոր ծնվի, առանց կրթության, քրտնաջան աշխատանքի և սեփական անձի վրա աշխատելու նա չի կարող դառնալ պրոֆեսիոնալ: Բնատուր տաղանդը միայն հիմքն է (սերմը), իսկ լավ մանկավարժը՝ այդ սերմի երկարատև խնամքի արդյունքը:

Այսպիսով, «մանկավարժ ծնվում են» ասելով՝ նկատի ունեն այն մարդկանց, ում համար այս մասնագիտությունն աշխատանք չէ, այլ կյանքի կոչում:

- Ձեր կարծիքով՝ կա՞ն վատ գրքեր: Ձեր ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը, և դրանցից ո՞ր գիրքը կրկին կընթերցեիք:

- Ֆրանսիացի գրող և փիլիսոփա Վոլտերն ասել է. «Բոլոր ժանրերը լավն են, բացի ձանձրալիից»: Այս տեսանկյունից՝ վատ գիրքը նաև այն գիրքն է, որը չի շարժում ընթերցողի ոչ մի էմոցիան՝ ո՛չ հիացմունք է առաջացնում, ո՛չ բարկություն, ո՛չ էլ մտորումներ, այլ պարզապես թողնում է անտարբեր:

Իմ ընթերցած գրքերից ամենատպավորիչը Սերո Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» վեպն է:

Կրկին և շարունակական կընթերցեմ ցանկացած հայրենասիրական գիրք:

- Խոսենք նախասիրություններիցդ ի՞նչն է, որ մի քանի ժամով Ձեզ կտրում է իրական կյանքից:

- Մարդ իրեն իրապես երջանիկ ու հանգիստ է զգում, երբ տեսնում է, որ իր արժեքները չեն կորչելու: Թոռնիկներին որպես հայրենասեր մարդ դաստիարակելով՝ ես կամուրջ եմ զգում անցյալի (իմ ապրած կյանքի և նախնիների) և ապագայի միջև: Դա իմ ներդրումն է վաղվա օրվա մեջ, ինչն էլ հենց տալիս է այդ բացառիկ բավարարվածության զգացումը:

Ինձ համար թոռնիկների հետ ժամանակը ոչ թե իրականությունից «փախուստ» է, այլ վերադարձ դեպի ամենահիրականն ու կարևորը՝ դեպի ընտանիքի ու հայրենիքի հիմքերը: Ես նրանց տալիս եմ արմատներ, որ ամուր կանգնեն հողին, և թևեր՝ որ բարձրանան:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը Ձեզ համար:

- Կյանքի շարժիչ ուժը հիմնականում սերն ու բարությունն է, ինչպես նաև մարդու ներքին նպատակասլացությունը և անընդհատ զարգանալու ձգտումը:

Բլից հարցեր
Պատասխանում եք կարճ և արագ:

- Երեք բառ, որով կբնորոշեք Ձեզ:

- Կշռադատող, բարեխիղճ և համբերատար:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Ինչից եմ սկսելու աշխատանքային օրս:

- Օրն սկսում եք ժամը...

- 6:00-ին:

- Սիրած աֆորիզմը:

- Սիրիր որ «Ապրես» և ապրիր որ «Սիրես»:

- Սիրելի զբաղմունքը:

- Շախմատ:

- Խորհուրդ, որը կտայիք:

- Մանկավարժներին խորհուրդ կտայի սիրել իրենց աշխատանքը, մշտապես ինքնակրթվել, լինել համբերատար:

- Իսկ վերջում... (ավելացրե՛ք այն, ինչ Ձեր մտքով անցնում է այս պահին):

- Լինե՛լ հայրենասեր:

Հարցազրույցը վարեց
Ելենա Չերնեցկայան

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:
Ստորագրված է տպագրության 29.07. 2026թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան